


ԲԱՅԲԱՆ

ԷԶԵՐ
ՆԱՄԱԿՆԵՐԻՑ







Общество книголюбов Армянской ССР

Библиотека книголюбa

Book lover,s association of the Armenian SSR

Book lover,s library



SOME PAGES
FROM THE LETTERS




БАЙРОН
СТРАНИЦЫ ИЗ ПИСЕМ

Ереван. «Советакан грох» 1986

«Sovetakan groqh» YEREVAN 1986


ՀՍՍՀ Գրքասերների ընկերություն
Գրքասերի գրադարան



ԲԱՅՐՈՆ ԷՋԵՐ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ



A T
18196



Երևան «Սովետական գրող» 1986

ԳՄԴ 84. 4Մք
Բ 269

The preface,
translation of the letters,
bibliography and annotations by
ANAHIT BEKARIAN

Вступительная статья,
перевод писем.
библиография и примечания
АНАИТ БЕКАРЯН

Ներածական խոսքը,
նամակների թարգմանությունը, մատեն-
ագիտությունը և ծանոթագրությունները՝
ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆԻ

Գրքույկի նպատակն է ներկայացնել հայ մշակույթի վերաբերյալ անգլիացի մեծ քանաստեղծ Ջ. Գ. Բայրոնի ունեցած այն տպավորությունները, խորհրդածու-
թյունները, գնահատականները, որոնք տեղ են գտել նրա նամակամու էջերում:
Հայաստանին և հայերին վերաբերող նամակներից քաղված հատվածները
ընթերցված են հայերեն, անգլերեն և ռուսերեն:

Գրքույկը նախատեսված է գրքասեր լայն շրջանների համար:

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեծ գրողի նամակներն, օրագրերը և բազմաթիվ գրառումներն արժեքավոր պատմական փաստաթղթեր են, գրական-ստեղծագործական խոստովանություններ, որոնք բացահայտում են գրողի անձը, նրան համակած զգացմունքների, մտորումների ու գաղափարների ինքնատիպ աշխարհը:

Ի տարբերություն նախորդ դարաշրջաններին պատկանող նամականիների, որոնք ի սկզբանե իսկ գրվում էին ոչ միայն հասցեատիրոջ, այլև հրապարակման նկատառումով, ռոմանտիկների թողած նամակները հիմնականում գերծ են այս կարգի «շահախնդրությունից»: Դրանք մեծավ մասամբ անհաշվեմկատ պողովումներ են, ինքնադրսևորման անկեղծ վկայություններ: Նամականու ազատ, անկաշկանդ ժանրը պարզապես թույլ էր տալիս ավելի անմիջականորեն արտահայտելու այն, ինչ հաճախ անհրաժեշտ էր լինում թաքցնել գեղարվեստական ստեղծագործության խորքերում:

Եվ այնուամենայնիվ, ռոմանտիկների՝ նույնիսկ տպագրության համար չնախատեսված նամակները, իրենց վերոհիշյալ հատկանիշների շնորհիվ, անգնահատելի արժեք են ներկայացնում դարաշրջանի գրական-հասարակական կյանքի արտացոլման առումով:

Անգլիացի մեծ բանաստեղծ Ջորջ Գոդոն Բայրոնի (1788—1824)՝ իր դարաշրջանի ամենապայծառ դեմքերից մեկի հարուստ նամականին այսօրինակ հուշարձաններից է: Նրա երկարատև, «ինքնակամ արքորը» պատճառ դարձավ, որ նա նամակներ գրի: «Ես շրջահայաց նամակագիր չեմ և սովորաբար գրում եմ այն, ինչ գալիս է տվյալ պահին», — գրել է Բայրոնը 1822-ին իր նամակներից մեկում՝ հասցեագրված հավանաբար Մերի Շելլինգ¹:

¹ Շելլի, Մերի (1797—1851), անգլիացի նշանավոր բանաստեղծ Պ. Բ. Շելլիի (1792—1822) կինը, փիլիսոփա և վիպասան Վիլյամ Գոդվինի (1756—1836) դուստրը: Մ. Շելլինգ գրել է «Ֆրանկենշտեյն,

Բայրոնի հարուստ նամականին լայն հնարավորություն է ընձեռում խորամուխ լինելու բանաստեղծի անձնական կյանքի և ստեղծագործության ամենամոլորական գաղտնարանների մեջ: Համաշխարհային գրականության պատմության մեջ քիչ են գրողի կյանքի և արվեստի փոխներթափանցումը ի ցույց դնող նման վկայություններ:

Բայրոնի նամակները իր անձնավորության անխարդախ հայելին են և պարունակում են չափազանց պերճախոս մեկնաբանություններ իր իսկ պոեզիայի վերաբերյալ: Զգացմունքների և մտքերի թարմությունն ու անմիջականությունը բանաստեղծի նամակների և օրագրերի ամենագրավիչ գծերից են: Դրանք ավելի ճշմարիտ և հստակ են արտացոլում մեծ բանաստեղծին, քան ժամանակակիցների թողած ցանկացած հիշողությունը և իրոք որ գրված են մի մարդու ձեռքով, որը խորհրդածելով ինքն իր հետ, իր ժամանակի հետ, ձգտում է պարզել լինելության, մարդկային հոգու և պատմության իմաստը: Այս առումով նամակներն, անտարակույս, բարձր գրական արժեք ունեն:

Բայրոնի գրելաոճը կարծես թե պարզ է, սովորական, բայց ոչ բացարձակ խոսակցական: Նա գրել է արագ, հազվադեպ ջնջելով առանձին բառեր: Նամակներում առկա արտահայտությունները, որպես կանոն, հստակ են, ճշգրիտ և ցայտուն: Հեղինակը խուսափել է «գեղեցիկ գրելաձևից», թեև հազվադեպ չեն մաս գրական զուգորդումներն ու մեջբերումները: Նրա նախընտրած գրական հետաքրքրությունների ոլորտում են Սկոտի և Շեքսպիրի, Շերիդանի² և Գոլդսմիթի³, 18-րդ դարի անգամ

կամ ժամանակակից Պրոմեթևս» (1816—1817) վիպակը, որը Բայրոնի կողմից գնահատվել է որպես զարմանալի ստեղծագործություն 19-ամյա աղջնակի համար, ինչպես նաև «Վալսերգա» (1823), «Վերջին մարդը» (1826) վեպերը և այլ ստեղծագործություններ:

Բայրոնին և Պ. Բ. Շելլին մտերմացրել էր Եվրոպայում (այդ թվում Անգլիայում) մոլեգնող ռեակցիայի նկատմամբ նրանց ունեցած ատելությունը, ինչպես նաև վտարանդիների ընդհանուր ճակատագիրը: Բայրոնը Շելլին համարում էր իր լավագույն ընկերը:

² Շերիդան, Ռիչարդ (1751—1816), իռլանդացի անվանի թատերագիր և բաղադրական գործիչ:

³ Գոլդսմիթ, Օլիվեր (1728—1774), անգլիացի գրող, 18-րդ դարի անգլիական սենսիտիվնտալիզմի ներկայացուցիչ:

ոչ հանրահայտ դրամատուրգների ստեղծագործությունները: Նրա հետաքրքրասիրությունը, անաչառ վերաբերմունքը դեպի իր ընկերները և ժամանակակիցները ոչ մի տեղ այնքան ակնհայտ չեն, որքան նամակներում:

Բայրոնի նամակների և օրագրերի ընթերցողը հենց բանաստեղծից է իմանում նրա գրական մտահղացումների ու խիզախումների մասին, հաղորդվում նրա բանաստեղծական երևակայության ու խոհերի տարերքին: «Չայլդ Հարոլդի ուխտագնացության» (1812—1818), «Դոն Ժուանի» (1819—1824), «Կայենի» (1821), «Բրոնզե դարի» (1821) և շատ ուրիշ երկերի ստեղծման հետ կապված տարատեսակ մանրամասնություններ կարելի է քաղել նամակների էջերից: Իսկ վերջիններս լի են պոեզիայով, և այդ պոեզիայի հերոսն ինքն է՝ Բայրոնը. մի մարդ, որն իր կյանքն ապրեց իր կերտած արվեստի փոթորկում ու խրոխտ հերոսի պես և արվեստի օրենքով:

Կարդալով Բայրոնի նամակները և օրագրերը, կարելի է հետևել նրա հասարակական, քաղաքական, գեղագիտական, փիլիսոփայական ու գրական հայացքների ձևավորման ու զարգացման ընթացքին, քաղել բազմաթիվ հավաստի տեղեկություններ 19-րդ դարի առաջին կեսին Արևմտյան Եվրոպայում տիրող հասարակական, քաղաքական ու գրական կյանքի վերաբերյալ: Այս առումով Բայրոնի նամակներն ու օրագրերը սթանդեյլիորեն զուգակցում են իրենց մեջ պատմական ու գրական հուշարձանի բոլոր արժանիքներն ու բարեմասնությունները:

Բայրոնի նամականու մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև հայերին և հայ մշակույթին վերաբերող էջերը: Դրանց մեջ արտացոլված են այն ջերմ սերն ու հարգանքը, որ տածել է հանճարեղ բանաստեղծը դեպի հայ ժողովուրդն ու նրա հարուստ մշակույթը:

1816-ի ապրիլի 25-ին՝ արդեն ճանաչում ստացած բանաստեղծ, բազմաթիվ բանաստեղծությունների և պոեմների⁴ հեղինակ Ջորջ Գորդոն Բայրոնը, անընդհատ եմթարկվելով իր

⁴ Այդ ժամանակ արդեն լույս էին տեսել բանաստեղծի «Պարսպության ժամեր» խորագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն (1807), «Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը» պոեմի առա-

հայրենիքում հալածանքի ու վիրավորանքի՝ հանդուգն էպիգրամների և պառլամենտական ելույթների համար, խորապես դժգոհ իր միջավայրից, հեռանում է Անգլիայից, այլևս չվերադառնալու որոշմամբ:

Նույն թվականի աշնանը Բայրոնը ծանոթանում է Մխիթարյանների⁵ հետ: Հայրենիքից հեռու, եվրոպական քաղաքակրթությունից հոգնած բանաստեղծը Ս. Ղազարի մայրավանքում սկսում է ուսումնասիրել հայերեն՝ երազելով ներթափանցել արևելյան պոեզիայի գաղտնաբանները: «Կարևորը այն չէ, թե Բայրոնը որչափով է սովորել հայերենը: Կարևորը երևույթն է, այն ջերմ համակրանքը, որ մա տածել է մեր երկրի պատմության և գրականության հանդեպ, այն խանդավառ հափշտակությունը, որ մա ամեն օր Ադրիականի փոթորկոտ ջրերը ճեղքելով գնացել է հայոց կղզին, մի ազնիվ նպատակով համակված՝ սովորելու լեզուն»⁶:

Հայ և արևմտաեվրոպական գրական առնչությունների պատմության մեջ նշանակալի տեղ է գրավում հայագիտության ասպարեզում Բայրոնի կատարած ուսումնասիրությունների հարցը: Հայ մշակույթին, պատմությանն ու լեզվին վերաբերող Բայրոնի նամակները՝ ուղղված Թ. Մուրին⁷ և Ջ. Մըրրեին⁸,

ջին և երկրորդ երգերը (1812), «Անգլիական երգիչներ և շոտլանդական տեսաբաններ» (1809), «Գյավուր» (1813), «Ծովաճեն» (1814), «Լարա» (1814) պոեմները և այլն:

⁵ Մխիթարյան միաբանություն, Մխիթարյաններ, հայ կրոնական (կաթոլիկ) և մշակութային կազմակերպություն, որը 1701-ին Կ. Պոլսում հիմնադրել է հայ հասարակական, գիտական, մշակութային և եկեղեցական նշանավոր գործիչ Մխիթար Սեբաստացին (1676—1749): Միաբանությունը 1706-ին տեղափոխվել է Մերոն (Հունաստան), իսկ 1717-ից հաստատվել Վենետիկի մոտ գտնվող Ս. Ղազար-կղզում, որտեղ և գործում է առ այսօր: Հետագայում, կանոնադրության փոփոխման կապակցությամբ ծագած վեճի պատճառով, միաբանների մի խումբ, թողնելով Վենետիկը, հաստատվեց նախ Տրիեստում (1773), իսկ այնուհետև՝ Վիեննայում (1811):

⁶ Խ. Դաշտենց, «Բայրոնը և հայերը», Հայպետհրատ, Ե., 1959, էջ 174:

Մուր, Թոմաս (1779—1852), իռլանդական ծագումով անգլիացի ռոմանտիկ բանաստեղծ: 1811-ին մա ծանոթանում է Բայրոնի հետ

ՎԵՐԸ ԿԸՆՈՒԹԻՒՆ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ

ՅՕՐԻՆԵԱԼ Դ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՒԳԵՐԵԱՆ

Յաշակերտութիւն Մեծին Մխիթարայ Բաբունայեանի :



Դ ՎԵՆԷՏԻԿ

ՏՊԱԳՐԵԱԼ

Դ ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

ՀՄԿԸ

ՎԵՐԼՆԻՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԱՆԳՂԻԱԿԱՆ

ՅՕՐԻՆԵԱԼ

Դ Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ
ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՒԳԵՐԵԱՆ

ՅԱՇԱԿԵՐՏՈՒԹԵՆԷ ՄԵԾԻՆ ՄԽԹԱՐԱՅ
ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ.



Դ ՎԷՆԷՏԻԿ

Դ ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ.

ՌՄԿԸ

ընդգրկում են 1816—1821 թվականները: Դրանք ինքնին արժեքավոր են և վառ ապացույց են այն մեծ դերի, որ խաղացել է Բայրոնը հայ մշակույթը օտարներին ծանոթացնելու գործում: Նրա կատարած բազմաթիվ թարգմանությունները հայ մատենագրությունից (հատվածներ Մ. Խորենացու «Հայոց պատմությունից», Ն. Լամբրոնացու «Ատենաբանությունից», Ս. Պողոսի և կորնթացիների նամակագրությունը, որի բնագիրը չի պահպանվել, իսկ թարգմանությունը այդ ժամանակ գոյություն է ունեցել միմիայն հայ մատենագրության մեջ և առաջին անգամ անգլերեն է թարգմանվել Բայրոնի կողմից, և այլն)⁹, անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն քերականությունների և անգլերեն-հայերեն բառարանի պատրաստման ու հրատարակման գործում Բայրոնի անմիջական մասնակցությունը մի անգամ ևս հաստատում են նրա արտակարգ հետաքրքրությունը դեպի հայ մշակույթը:

Հայերենի իր ուսուցչի՝ Հարություն Ավգերյանի¹⁰, խնդրանք-

և ուսումնում նրա մտերիմ ընկերը: Մուրը Բայրոնի առաջին կենսագիրներից է: Բանաստեղծի մահից հետո, 1830-ին, նա Լոնդոնում հրապարակում է Բայրոնի նամակները և օրագրերը:

⁹ Մըրրե, Ջոն (1778—1843), Բայրոնի հրատարակիչը: Բայրոնը Մըրրեի հետ պահպանել է մշտական նամակագրություն՝ սկսած 1811-ից մինչև իր մահը:

⁹ Տե՛ս, օրինակ, «Ծաղկաբաղ քերթողաց անգղիացոց», Վեներտիկ, Ս. Ղազար, 1852, «Հայերեն վարժությունները և բանաստեղծությունները», Վեներտիկ, Ս. Ղազար, 1870 և այլն:

¹⁰ Ավգերյան, Հարություն (1774—1854), ծնվել է Անկարայում, 12 տարեկան հասակում տեղափոխվել է Ս. Ղազար կղզի և 1798-ին ձեռնադրվել քահանա: Ավգերյանը զարգացած մարդ էր, լեզվաբան, բառարանագիր և թարգմանիչ: Կատարելապես իմացել է հունարեն, լատիներեն, եբրայերեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, հունգարերեն, գերմաներեն և թուրքերեն: Նա, Բայրոնի հետ միասին, կազմել և հրատարակել է անգլերեն-հայերեն (1817), հայերեն-անգլերեն (1819) քերականության ձեռնարկներ: Ավգերյանը հայտնի է նաև որպես հմուտ թարգմանիչ. առաջին անգամ հայերեն (գրաբար) է թարգմանել Ջոն Միլտոնի «Դրախտ կորուսյալը» (1824), իտալերեն՝ Կերսես Լամբրոնացու «Ատենաբանությունը» (1812), Ներսես Ծնորհալու «Հավատով խոստովանիմը» (1823) և այլն: Ավգերյանը նաև ուրիշ բազմաթիվ արժեքավոր աշխատությունների հեղինակ է:

քով Բայրոնը հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկի համար մի առաջաբան է գրում: Քաղաքական նկատառումներից ելնելով, Մխիթարյանները որոշում են չհրապարակել այն¹¹: Բայրոնի՝ ոչ մի հաշտության, զիջումի չգնացող, խոռվահույզ հոգին, ըմբոստացավ այս անգամ արդեն օբյեկտիվ պատճառների դեմ. բանաստեղծը վիրավորվեց և դադարեցրեց իր այցելությունները Ս. Ղազար:

1823-ի հուլիսին Բայրոնը Իտալիայից մեկնում է Հունաստան, որն այդ ժամանակ ազգային ազատագրական պայքար էր մղում թուրքական բռնակալների դեմ:

Նախքան Հունաստան մեկնելը, Բայրոնը վերջին անգամ այցելում է իր հայ բարեկամներին: Ծառ հուզիչ է եղել բանաստեղծի. բաժանումը Մխիթարյաններից: Երբ բանաստեղծի մակույկը հեռացել է տեսադաշտից, Հարություն Ավգերյանն ու Սուրբաս Սոմալյանը¹², այդ «երկու ալեփառ ծերունիներն

¹¹ Թուրքերի և պարսիկների հասցեին ասված սուր խոսքերի պատճառով վերոհիշյալ առաջաբանը դեռևս երկար ժամանակ մնաց անտիպ: Հետագայում Թոմաս Մուրը գտավ այն բանաստեղծի թղթերում և հրատարակեց 1830-ին նրա կենսագրության և նամակառու մեջ (Th. Moore. «Lord Byron's Life, Letters and Journals». London): Միայն դրանից հետո այդ առաջաբանը թարգմանվեց հայերեն և «Ի թղթոց Լորտ Պայրոնի» խորագրով տեղ գտավ 1852-ին Մխիթարյանների կողմից լույս ընծայած «Ծաղկաբաղ բերթողաց անգղիացոց» գրքում: Այնուհետև այն բազմիցս զետեղվել է Մխիթարյանների կողմից հրատարակած տարբեր ժողովածուներում (տե՛ս, օրինակ, Բայրոն, «Հայերեն վարժությունները և բանաստեղծությունները», Վենետիկ, Ս. Ղազար, 1870, 1907), արևելահայ և արևմտահայ պարբերականներում, տարեցույցներում և այլուր:

Այդ առաջաբանը լույս է տեսել նաև ռուսերեն: Դեռևս 1893-ին այն տպագրվել է «Семья» ամսագրում (տե՛ս № 54 և № 55-ում զետեղված Յու. Վեսելովսկու «Байрон на острове св. Лазаря» հոդվածը): Այնուհետև այն տեղ է գտել Յու. Վեսելովսկու «Литературные очерки» (М., типография А. В. Васильева, 1900), «Очерки армянской литературы, истории и культуры» (Ереван, «Айастан», 1972) և այլ գրքերում, ինչպես նաև Ա. Վեսելովսկու աշխատություններում:

¹² Սոմալյան, Սուրբաս (1776—1846), ծնվել է Կ. Պոլսում: 1804-ին Վենետիկում ձեռնադրվել է քահանա: 1808-ին քարոզչական պաշտոնով ուղարկվել է Կ. Պոլիս, 1817-ին՝ Մադրաս, 1820-ին վերադարձել է Վենետիկ:

ՀԻԼԻՈՆԵԱՆ



Քերթուած Լորտ Բայրոնի:

(Ժաբժմանութիւն)

Մոզսիսի Չոհրապետանց

Արցախեցւոյ:



Երեւոյ գիւղ:

Ի Համախի:

Պատգամներ Լազարէի:

1857-ՌՅԶ

Ի Տ Ա Լ Ի Ա



ՎԵՆԵՏԻԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ
1860

իրարու երես մայեցան... մեկնած էր ան, զոր տարիներով սիրած էին իրենց անատակ որդույն պես. ան պիտի մեկներ դեպի Արևելք... և երկուքին ալ աչքերեն զույգ մը արցունքի կաթիլներ գլորեցան ու տղու պես լացին»¹³:

Բանաստեղծը բառացիորեն ապրում էր բոլոր տառապած ու տանջված ժողովուրդների ու ազգերի՝ հայ, հույն, իսպանացի, իտալացի, դառը ճակատագրով: Պատմական չէ, որ մա որոշում է ընդունում մասնակցելու հույն ժողովրդի ազատության համար մղվող սրբազան պայքարին: «Բոլորն ասում են, որ ես կարող եմ շատ օգտակար լինել Հունաստանին: Ոչ ես, ոչ էլ նրանք չգիտեն, թե ինչպես, բայց համենայն դեպս փորձենք»¹⁴, — գրում է Բայրոնը: Նա մեկնում է Հունաստան, որպես ազատագրական պայքարի զինվոր՝ ժամանակակիցների վկայությամբ դեռ առաջին օրերից ցուցաբերելով արտակարգ արիություն, ինքնատիրապետում ու նվիրվածություն:

Իր կյանքի ուղին բանաստեղծն ավարտում է թուրքերով շրջապատված Միսոլոնգի¹⁵ քաղաքում, հունական ապստամբների ջոկատում՝ որպես ճնշված ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարի հերոս և մարտիկ:

* * *

Բանաստեղծի կյանքի ու մահվան տարեկիցների կապակցությամբ (1846, 1894, 1901, 1924, 1932 և այլն) Միսիթարյանները հրատարակել են նրա մի շարք նամակները: Հայ անվանի գրող Խաչիկ Դաշտենցի, որն իր հոդվածներում անդրադարձել է բանաստեղծի կյանքին ու ստեղծագործություններին, «Բայրոնը և հայերը» գրքում¹⁶ նույնպես ընդարձակ մեջ-

¹³ Ռ. Որբերյան, «Լորտ Պայրըն (ի Ս. Ղազար)», «Բազմավեպ», 1932, № 6—7, էջ 272:

¹⁴ Thomas Medwin. «Journal of the Conversations of Lord Byron noted during the years 1821—1822». Paris, 1825, v. 2, p. 175.

¹⁵ Միսոլոնգի (Մեսոլոնգիոն), քաղաք Արևմտյան Հունաստանում:

¹⁶ Խ. Դաշտենց, «Բայրոնը և հայերը», Հայպետհրատ, Երևան, 1959:

բերումներ կան այդ նամակներից: Բայրոնի մահվան 150-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտորի հրատարակությամբ 1974-ին լույս է տեսնում «Էջեր Զ. Գ. Բայրոնի հասարակական-քաղաքական գործունեությունից» գիտա-ինֆորմացիոն բյուլետենը, որտեղ որոշակի տեղ է հատկացված նրա հայկական թեմայով գրված նամակներին: Տարիներ առաջ Վենետիկում, առանձին գրքույկով, այդ նամակները լույս տեսան անգլերեն¹⁷:

Անտարակույս, մեծ բանաստեղծի ամեն մի խոսքը հայ ժողովրդի մասին արժանի է ընթերցողների լայն զանգվածի ուշադրությանը: Չնայած դրան, մինչև այսօր հայ ընթերցողն առանձին գրքով և մանրամասն մեկնաբանություններով ու ծանոթագրություններով չունի իր ձեռքի տակ Բայրոնի նամակները հայերի ու հայ մշակույթի վերաբերյալ, իսկ ուսւ ընթերցողը գրեթե ծանոթ չէ դրանց:

Այս գրքույկը նպատակ ունի լրացնելու այդ բացը: Հայերեն և ռուսերեն ենք թարգմանել Թ. Մուրի «Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը» գրքում¹⁸ զետեղված Բայրոնի «հայկական» նամակները: Նպատակահարմար ենք գտել նամակների այս գրքույկի հավելվածում զետեղել նաև Բայրոնի կողմից հայերեն-անգլերեն քերականության համար գրված առաջաբանը և Թ. Մուրի որոշ ծանոթագրությունները Բայրոնի նամակների վերաբերյալ:

Ժամանակագրական կարգով զետեղված է Բայրոնի ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների՝ առանձին գրքերով, ժողովածուներում և պարբերական մամուլում, և նրան միլիված ուսումնասիրությունների մատենագիտական ցանկը:

ԱՆԱՀԻՏ ԲԵՋԱՐՅԱՆ

¹⁷ «Lord Byron and the Armenians». Byron's Letters and Journals, Venice.

¹⁸ Thomas Moore. «The Life, Letters and Journals of Lord Byron». London, John Murray, 1908.




Ս. ՂԱԶԱՐ. Մխիթարյան միաբանության շենքի ընդհանուր տեսքը



Ս. ՂԱԶԱՐ. վանքի գլխավոր մուտքի կամարաշարը

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԵՆԻՆՍԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ



1. ՊՐԵ ՄԸՐՐԵԻՆ

4 դեկտեմբերի 1816, Վենետիկ

... Սկսել և շարունակում եմ հայոց լեզվի ուսումնառությունը, որին տիրապետում եմ հնարավորություններիս սահմաններում. ամեն օր գնում եմ հայկական վանք՝ դասեր առնելու մի գիտնական վանականից¹, և որոշ բացառիկ ու օգտակար տեղեկություններ եմ արդեն ձեռք բերել արևելյան այդ ժողովրդի գրականության և սովորությունների մասին: Նրանք այստեղ ունեն հաստատություն, եկեղեցի և իննսուն վանականից բաղկացած միաբանություն: Նրանցից ոմանք շատ ուսյալ և կիրթ մարդիկ են: Ունեն մաև տպարան և մեծ ջանքեր են գործադրում իրենց ազգը լուսավորելու համար: Իմ համոզմամբ հայոց լեզուն (որ երկուսն է՝ գրաբար և աշխարհաբար) դժվարին է, բայց ոչ անհաղթահարելի (համեմայն դեպս, ես հուսով եմ): Կշարունակեմ ուսումնառությունս: Հարկավոր է միտքս մարզել ավելի խիստ ուսման բնագավառում, և այս լեզուն, ամենադժվարինը լինելով ինձ համար, նույնպիսի անհրաժեշտություն է, որպիսին՝ պոչը օձի համար:

.....
Կարծում եմ, որ ձմեռը կանցկացնեմ **նրա** հետ և կզբաղվեմ հայկական այբուբենով: Բարեբախ:

¹ Խոսքը Հ. Ավգերյանի մասին է:

տաբար տիկինը² իմ հանդեպ նվազ անողորք է, քան լեզուն. այլապես երկուսի միջև խելքիս մնացած մասն էլ կթոցնեի: Ի դեպ նա հայտնի չէ, այլ վե-
նետիկունի, կարծում եմ, որ այդ մասին արդեն գրել եմ:

2. Պ-ՐՆ ՄՈՒՐԻՆ

5 դեկտեմբերի 1816, Վենետիկ

Իբրև հաճելի ժամանց, ամեն օր հայերեն եմ սովորում հայկական վանքում: Պարզվեց, որ միտքս պայծառացնելու համար ինձ հարկավոր է մի տաժանակիր աշխատանք: Սա ամենադժվարին աշխատանքն է, որ ես կարողացա գտնել այստեղ իբրև ժամանց՝ միտքս տանջահար անելու և կենտրոնանալու համար: Ինչևէ, սա մի հարուստ լեզու է, և լիովին փոխհատուցվում են սովորողի չարչարանքները: Ես ջանք եմ թափում և կշարունակեմ, բայց չեմ կարող երաշխավորել ոչ հաջողություններիս, ոչ էլ ձգտումներիս իրականացման համար: Վանքում կան մի շարք չափավանց հետաքրքիր ձեռագրեր, գրքեր, ինչպես նաև

² Վենետիկում Բայրոնը սիրահարվում է վենետիկցի հարուստ վաճառական Սեզատիի քսաներկուամյա տիկնոջը՝ գեղեցկուհի Մարիանային, որին ծնողները բռնությամբ ամուսնացրել էին ծեր վաճառականի հետ: Այդ մասին Բայրոնը ավելի մանրամասն գրում է 1816-ի նոյեմբերի 17-ի նամակում հասցեագրված Թ. Մուրին (տե՛ս Th. Moore "The Life, Letters and Journals of Lord Byron". London. John Murray, 1908, p. 329):

թարգմանություններ այժմ կորած հունարեն բնագրերից, նաև պարսկերենից, ասորերենից և այլն՝ չհաշված իրենց ժողովրդի բնիկ երկերը: Չորս տարի առաջ ֆրանսիացիները հիմնեցին մի հայկական ամբիոն: Երկուշաբթի առավոտյան ներկայացան քսան աշակերտ՝ լի ազնիվ եռանդով, սրտաբաց երիտասարդությամբ և անզուգական աշխատասիրությամբ: Նրանք իրենց ազգի և աշխարհակալ հաղթությանն արժանի քաջությամբ դիմացան մինչև հինգշաբթի: Այնուհետև այբուբենի քսանվեցերորդ տառի վրա նրանցից **տասնհինգի** ուժերը սպառվեցին: Իբրև նրանց արդարացում պիտի ասել որ, դա, հիրավի, այբուբենի մի Վաթերլոո է: Եվ սակայն որքան բնորոշ է այդ մարդկանց (ֆրանսիացիներին-Ա. Բ.) հրաժարումը, այս անգամ էլ նրանք վարվեցին այնպես, ինչպես սովոր են վարվել իրենց միապետների հետ՝ հին ոտանավորի պարողիայի պես.

«Վերցրի մի բան, և տհր մի բան,
վերցրի արքա, և տհր արքա»:


3. ԱՎԳՈՒՍՏԱ ԼԻՒՆՅՅ

18 դեկտեմբերի 1816, Վենետիկ

Ամեն առավոտ գնում եմ հայկական վանք (հայերի. փոքրիկս, ոչ միանձնուհիների) լեզու սովորելու, նկատի ունեմ հայոց լեզուն (քանզի քեզ

³ Լի, Ավգուստա (1783—1851), Բայրոնի խորթ քույրը: Բայրոնի նամակագրությունը Ավգուստայի հետ շարունակվել է բանաստեղծի ամբողջ կյանքում: Բայրոնը նրան նվիրել է շատ բանաստեղծություններ:

կարծեմ հայտնի է, որ ես խոսում եմ իտալերեն ավելի սահուն, քան ճիշտ): Եթե դու հարցնես, թե իմ ինչին է պետք այդ հազվագյուտ լեզուն, ես կարող եմ միայն պատասխանել, որ դա արևելյան է, և դժվարին է, և գրավում է ինձ. սրանք այն պատճառներն են, որ իմ մտածելակերպի դեպքում, որն, ինչպես քեզ հայտնի է, նույնպես արևելյան է և դժվարին, բավարար են:



Ջ. Գ. Բայրոնի հայերեն ստորագրությունը

..2

4. Պ-ՐՆ ՄՈՒՐԻՆ

24 դեկտեմբերի 1816, Վենետիկ

... Իմ «կյանքի ընթացքը» խիստ կարգավորվում է: Առավոտները մակուկով գնում եմ Ս. Ղազար վանքի հայրերի հետ հայերեն թոթովելու և օգնելու նրանցից մեկին⁴ անգլերենը ուղղելու անգլերեն-հայերեն քերականության մեջ, որը շուտով հրատարակվելու է:

⁴ Խոսքը Հ. Ավգերյանի մասին է:

Հրատ. Փիլիպպոս Վարդապետեանի

Բ Ա Յ Ր Ը Ն

Շ Ի Լ Ի Ո Ն Ի Կ Ա Լ Ա Ն Ա Ի Ո Ր Ը

Թ ա ր գ մ.

Յովհաննէս Թումանեանց

Թ Ի Ֆ Լ Ի Ջ

Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Типогр. И. Мартirosianца.

1896

5. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

27 դեկտեմբերի 1816, Վենետիկ

Առավոտյան շարունակում եմ հայերենի պարապմունքներս, միաժամանակ խրախուսելով և աջակցելով Ս. Ղազար վանքում այժմ տպագրվող անգլերեն-հայերեն քերականության անգլերեն բաժինը կազմելուն:

Հայերի առաջնորդը եպիսկոպոս է, մի հրաշալի ծերունազարդ մարդ՝ ասուպաձև մորուքով⁵: Հայր Պասկալը⁶ նույնպես զարգացած և բարեպաշտ մարդ է: Նա երկու տարի ապրել է Անգլիայում:

6. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

2 հունվարի 1817, Վենետիկ

Մեկ այլ ծրարով ուղարկում եմ ձեզ մի քանի թերթ անգլերեն-հայերեն քերականությունից՝ հայերի օգտագործման համար, որի հրատարակմանը ես իրոք խթանել և աջակցել եմ: (Այն ինձ վրա նստեց ընդամենը հազար ֆրանկ՝ ֆրանսիական լիվր): Դեռ շարունակում եմ հայոց

⁵ Ագոնց, Ստեփաննոս Գյուվեր (1740—1824), արքեպիսկոպոս, ծնվել է Տրանսիլվանիայի Զուրջով քաղաքում: Նրա գրչին եմ պատկանում կրոնա-բարոյախոսական և գիտական մի շարք երկեր: Աշխարհագրական աշխատություններում պաշտպանել է Կոպեռնիկոսի արևակենտրոն ուսմունքը և համեմատական երկրագիտության սկզբունքները:

⁶ Նույն ինքը՝ Հ. Ավգերյանն է: Բայրոնը այդպես էր անվանում նրան:

լեզվի դասերս, ճիշտ է ոչ բունն առաջադիմությանը, բայց և օրեցօր եղածին մի բան ավելացնելով: Հայր Պասկալը իմ աննշան օգնությանը (նրա խոսակերներն անգլերենի եմ թարգմանում) շարունակում է պատրաստել հայերեն-անգլերեն քերականության (անգլիացիների համար) ձեռագիրը, որը նույնպես կտպագրվի, երբ ավարտվի:

Կուզենայինք իմանալ, թե կան, արդյո՞ք, հայերեն տպատատեր և հայ մամուլ Անգլիայում՝ Օքսֆորդում, Քեմբրիջում կամ մի որևէ այլ տեղ: Դուք, իհարկե, տեղյակ եք, որ շատ տարիներ առաջ Վիստոնները⁷ Անգլիայում հրատարակեցին «Հայոց պատմության» բնագիրը՝ իրենց կատարած լատիներեն թարգմանության հետ մեկտեղ: Գոյություն ունեն, արդյո՞ք, այդ տպատատերը և որտեղ են: Խնդրում եմ հարց ու փորձ արեք Ձեր լավատեղյակ ծանոթներին:

Երբ այս քերականությունը (ես նկատի ունեմ այժմ տպագրվողը) պատրաստ լինի, չեք առարկի, արդյո՞ք, վերցնել քառասուն կամ հիսուն օրինակ, որոնք հինգ կամ տաս գինեյից ավելի չեն արժենա և դրանց վաճառքով շարժել ուսյալների հետաքրքրությունը: Պատասխանեք՝ այո կամ ոչ, ինչ-

⁷ 1736-ին Լոնդոնում Վիստոն եղբայրների թարգմանությանը լատիներեն լույս է տեսնում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» և Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը»: Անգլիացի երկու եղբայրները հայերեն սովորել էին իրենց հորից, որը դաստիարակի պաշտոն էր վարել հնդկահայ հարուստ մի ընտանիքում:

պես կկամենաք: Կարող եմ վստահեցնել, որ նրանք ունեն մի շարք հետաքրքիր գրքեր և ձեռագրեր, գլխավորապես թարգմանություններ այժմ կորած հունարեն բնագրերից: Բացի այդ, նրանք այստեղ ներկայացնում են մի շատ հարգելի և ուսումնասեր միաբանություն, և դեռ Բոնապարտի օրոք ֆրանսիացի մի շարք գիտնականներ մեծ եռանդով ձեռնամուխ են եղել նրանց լեզվի ուսումնասիրությանը:

7. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

3 մարտի 1817, Վեներտիկ

Հայերեն քերականությունը հրատարակվում է, բայց հայերենի դասերս առաջժ ընդհատվել են, մինչև որ գլխացավս մի քիչ մեղմանա:

8. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

25 մարտի 1817, Վեներտիկ

Հայերեն քերականությունը հրատարակվում է, այսինքն, միայն **մեկը**, մյուսը դեռևս ձեռագիր վիճակում է⁸: Անցյալ ամիս հիվանդությունս խանգարեց ինձ տեղիցս շարժվելու, և ես ոչ մի նոր բան չեմ արել հայերենի հետ կապված:

⁸ 1817-ին Ավգերյանը և Բայրոնը միացյալ ջանքերով հրատարակում են անգլերեն-հայերեն քերականության (հայերի համար) ձեռնարկը, իսկ 1819-ին՝ հայերեն-անգլերեն քերականության ձեռնարկը անգլիախոս ուսանողության համար:

9. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

31 մարտի 1817, Վենետիկ

Արդյո՞ք գրել եմ Ձեզ, որ թարգմանել եմ առաքելական թղթերից երկուսը՝ ս. Պողոսի և կորնթացիների նամակագրությունը, որ մեզ մոտ կորած է, բայց հայերեն կա և, ինձ թվում է, շատ արժանահավատ է: Ես այն թարգմանել եմ Ս. Գրքին հատուկ անգլերենով⁹:

10. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

8 հունիսի 1817, Վենետիկ

Այս նամակը պաշտոնապես Ձեզ կհանձնեն երկու հայ վանականներ, որոնք Անգլիայով ուղևորվում են Մադրաս: Ձեզ կհանձնեն նաև քերականության մի քանի օրինակ, որոնք կարծում են սիրով կվերցնեն: Եթե որևէ բանով կարող եք օգտակար լինել նրանց՝ ծովաշինների կամ էլ Արեւելյան Հնդկաստանի Ձեզ ծանոթ անձանց միջոցով, ապա ես ավելի քան երախտապարտ կլինեմ, քանի որ նրանք և նրանց միաբանությունը, Վենետիկ ժամանելուցս ի վեր, չափազանց ուշադիր և բարեկամաբար են տրամադրված իմ նկատմամբ: Նրանց անուններն են՝ հ. Սուքիաս Սոմալյան և հ. Սարգիս Թեոդորոսյան¹⁰: Խոսում

⁹ Այս նամակի վերաբերյալ Բայրոնի կենսագիր Թ. Մորը տալիս է ծանոթագրություն: Տե՛ս՝ էջ 33:

¹⁰ Խոսքը հայ եկեղեցական-հասարակական ակաճավոր

են իտալերեն, հավանաբար ֆրանսերեն և մի քիչ էլ անգլերեն: Կրկին հիշեցնում եմ խնդրանքս, հարգանքներով, վստահաբար միշտ Ձեր՝ Բայրոն:

Գուցե կարողանաք օգնել նրանց ուղևորությանը, տալով կամ ձեռք բերելով հանձնարարականներ՝ Հնդկաստանում ներկայացնելու համար:

11. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

27 հունվարի 1818, Վենետիկ

Հայրս, այսինքն, իմ հայ հայրը, հ. Պասկալը, մեր վանքի բոլոր հայրերի անունից հղում է Ձեզ ներհուն ողջույններ:

Քանի որ Եվսեբիոսի՝ վաղուց կորած և վերջերս գտնված, բնագրի հատվածների թարգմանիչները հաճությամբ տրամադրեցին դրա հայտագիրը, ներդիր ուղարկում եմ Ձեզ վեց օրինակ և խնդրում բաժանորդներ գտնել երկու համալսարաններում¹¹, ինչպես նաև գիտունների և տգետների այն շրջաններում, որոնք կցանկանալին թոթափել իրենց անգիտությունը: Այս է խնդրում վանքը, խնդրում եմ ես, և նույնը բարեհաճեցեք խնդրել **Դուք** ուրիշներին:

գործիչ Սարգիս Թեոդորյանի (1783—1877) մասին է: Վենետիկի Մխիթարյան միաբանության անունից նա բանակցություններ է վարել հնդկահայ մեծահարուստներ Էդուարդ Ռաֆայելի Ղարամյանի և Սամվել Մուրադյանի կտակները ձեռք բերելու համար: Հետագայում նշանակվել է Ռաֆայելյան և Մուրադյան վարժարանների տեսուչ:

¹¹ Խոսքը Քեմբրիջի և Օքսֆորդի համալսարանների մասին է:

12. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

11 ապրիլի 1818, Վեներտիկ

Ինչո՞ւ չուղարկեցիք նամակիս պատասխանը և հայկական **Եվսեփոսի** թարգմանության բաժանորդների ցուցակը, որի հայտագրի օրինակները (ֆրանսերեն լեզվով) ուղարկեցի Ձեզ երկու ամիս առաջ: Արդյոք, ստացել էք նամակս. կուղարկեմ մեկ ուրիշը: Դուք չպետք է անուշադրության մատնեք իմ հայերին:

13. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

28 մարտի 1820, Ռավեննա

Կուզե՞նայի իմանալ թե ի՞նչ եղան ս. Պողոսի երկու առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերենից ավելի քան երեք տարի առաջ և անցյալ աշնանը Ռոբերթսին գրած նամակս, որոնց այդպես էլ ուշադրություն չդարձրիք: Սույնի հետ ուղարկում եմ երկու ծրար:

14. Պ-ՐՆ ՄԸՐՐԵԻՆ

9 հոկտեմբերի 1821, Ռավեննա

Ի՞նչն է պատճառը, որ մի կողմ եք դրել ս. Պողոսի առաքելական թղթերը, որ թարգմանել էի հայերենից, մինչդեռ տպագրել եք մի փուշ քան, որից ծնունդ առավ «Վամպիր»-ը¹²: Գուցե վախե-

¹² Պոլիդորիի վեպը, որը հրատարակվել է Բայրոնի ան-

նում եք հրատարակել որևէ գործ, որ ներհակ լինի մանիքեության¹³ հարցում այդ եռամսյա հանդեսի կեղծավոր կարծիքին: Խնդրում եմ անմիջապես ուղարկել ինձ այդ առաքելական թղթերի արտատիպը: Ես ավելի լավ քրիստոնյա եմ, քան թե Ջեր այդ քարոզիչները, թեև վարձահատույց չեմ եղել այդպիսին լինելու համար:

վան տակ: Հոբհաուզի (1786—1869, Բայրոնի բարեկամ, անգլիացի գրող և հասարակական գործիչ) ստիպմամբ Պոլիդորին 1819-ի մայիսի 5-ին հրապարակում է բացատրական նամակ «Վամպիրի» կապակցությամբ:

¹³ III—VII դարերի կրոնա-փիլիսոփայական հոսանք պարսկական Սաաանյան պետության մեջ: Այս հոսանքի գաղափարական հիմքը լույսի և խավարի, չար ու բարի աշխարհների հակադրությունն ու պայքարն է: Անվանումը ծագում է կրոնի հիմնադիր պարսիկ Մանիի անունից, որը ծնվել է 216-ին և խաչվել 276-ին: Այն հետագայում լայն տարածում է գտնում նաև Արևմուտքում:

1. [ԱՌԱՋԱԲԱՆ՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ]

Հետևյալ հետաքրքրական հատվածը, որ գրու-
նված է նրա (լորդ Բալթոնի—Ա. Բ.) թղթերի մեջ,
կարծես թե նախատեսված է եղել իբրև հայերեն
քերականության առաջաբան, որի մասին հիշա-
տակություն կա վերոհիշյալ նամակում (խոսքը
վերաբերում է 2 հունվարի 1817 թվակիր նամակին՝
հասցեագրված Ջոն Մըրրեին, — Ա. Բ.):

ԹՈՄԱՍ ՄՈՒՐ

Անգլիացի ընթերցողը հավանաբար զարմանա,
որ իմ անունը առնչված է այս կարգի գործի հետ
և հակված լինի հավատ ընծայել լեզվագետի իմ
արժանիքներին ավելին, քան դրանք իրոք արժա-
նի են:

Զցանկանալով կամովին մեղսակից լինել այդ-
պիսի մի պատրանքի, ուզում եմ հնարավորին չափ
համառոտակի ներկայացնել իմ անձնական դերը
այս գործում և այն դրդապատճառները, որոնցով
առաջնորդվել եմ: Երբ 1816-ին ժամանեցի Վենե-
տիկ, միտքս այնպիսի վիճակում էր, որ պահանջ
էի զգում մի գործի, որը երևակայությանս համար
քիչ ասպարեզ թողներ և բավականաչափ դժվարու-
թյուն հարուցեր որոնումներինս մեջ:

Այդ ժամանակ ես նույնպես, շատ ճանապար-
հորդների նման, խիստ տարված էի Ս. Ղազար
վանքի միաբանությամբ, որը միավորում է կղերա-

կան հաստատության բոլոր առա՛վելությունները՝ առանց նրա մոլորություններից որևէ մեկի:

Այս միաբանության եղբայրաց մաքրակցությունը, հանգստավետությունը, բարեկրթությունը, անկեղծ նվիրվածությունը, բարձր արժանիքները, առաքինությունները սքանչելիորեն ներդաշնակված են համակելու աշխարհիկ մարդուն մի հավատով, թե նույնիսկ այս կյանքի մեջ կա մի ուրիշը և ավելի լավը:

Այս մարդիկ մի հարստահարված և բարձրատոհմ ազգի կրոնավորներ են, ազգ, որը հրեաների և հույների պես տարագիր ու ստրուկ է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման և վերջինների ստրկամտության: Այս ժողովուրդը հարստացել է առանց կեղեքելու և ստրկության մեջ արժանացել պատվի՝ առանց բանասարկության: Բայց նրա տեղը, այնուամենայնիվ, երկար ժամանակ եղել է «գերության տան» մեջ, որը վերջերս բազմապատկել է իր անթիվ օթևանները:

Թերևս դժվար է գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավորող ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք: Սակայն ինչպիսին էլ լինեք նրանց ճակատագիրը, որը դառն է եղել, ինչպիսին էլ լինի ապագայում, նրանց երկիրը հավետ պիտի մնա աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և, թերևս նրանց լեզուն միայն ավելի խոր ուսումնասիրության պահանջ է դնում՝ ավելի գրավիչ դառնալու համար: Եթե վստահենք

Ս. Գրքին, դրախտը Հայաստանում էր, Հայաստան, որն իր հողի վաղանցուկ առնչակցության պատճառով Ադամի սերունդների պես թանկ վճարեց մի մարդու երջանկության դիմաց, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանում էր, որ ջրհեղեղը սկսեց տեղի տալ, և իջավ աղավնին: Բայց դրախտը դեռ չէր հասցրել անհետանալ, երբ ծալր առավ այդ երկրի տարաբախտությունը, քանզի երկար ժամանակ հզոր թագավորություն լինելով հանդերձ, համարյա երբեք անկախ չեղավ. և պարսից սատրապները, և թուրք փաշաները նմանաբար անպատ դարձրին այն երկիրը, ուր աստված մարդուն ստեղծել էր իր իսկ պատկերով»:

II. ԹՈՄՍԱ ՄՈՒՐԻ ԲԱՅՐՈՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Բայրոնի անվանի կենսագիր Թոմաս Մուրը իր «Լորդ Բայրոնի կյանքը, նամակները և օրագրերը» գրքում տալիս է ընդարձակ ծանոթագրություններ Բայրոնի կյանքի և գործունեության վերաբերյալ: Այստեղ մենք նպատակահարմար ենք գտնում մեջբերելու դրանցից մի քանիսը՝ կապված հայերի և հայ մշակույթի հետ:

1. Ծանոթագրություն՝ 31 մարտի 1817 թվակիր նամակի

Այս առաքելական թղթերի վավերականության միակ հավանական երաշխիքը բխում է այն փաստից, որ ս. Պողոսը (Մոշեյմի և ուրիշների կարծիքով) մեզ մոտ առաջինը համարվող իր թղթից առաջ, կորնթացիներին ուղարկած է եղել առաքելական թուղթ: Եվ չնայած սրան, այս թղթերը բոլորեքեան համարվել են անվավեր: Թեև Պրայմլթ Աշքըրը, Իոհաննը, Գրեգորիուսը և ուրիշ ուսյալ մարդիկ հաճախակի հիշատակում էին դրանց գոյության փաստը հայերենում, սակայն, իմ կարծիքով, առաջինը Վիստոններն էին, որ այդ լեզվից թարգ-

մանեցին թղթերը և հունարեն ու լատիներեն տարբերակների հետ մեկտեղ կցեցին Մովսես Խորենացու «Հայոց պատմության» իրենց հրատարակությանը, որ տպագրվեց 1736-ին: Լորդ Բայրոնի թարգմանությունը, որքան ինձ հայտնի է, երբևէ անգլերենում արված առաջին փորձն է և լինելով նրա գրչի արդյունքը, անշուշտ, պետք է, որ առավել հետաքրքրություն առաջացնի, և ընթերցողը անբավական չի մնա, գտնելով այն Հավելվածում: Իմ ունեցած օրինակին կցված է իր իսկ ձեռքով արված հետևյալ մակագրությունը. «Անգլերեն թարգմանեցի, 1817, հունվար և փետրվար, Ս. Ղազար վանքում, հայ վանական Բ. Պասկալ Ավգերի օժանդակությամբ և հայերեն բնագրի մեկնությամբ՝ ԲԱՅՐՈՆ: Ջեոքիս տակ ունեի նաև (ավելացնում է նա) լատիներեն տեքստը, որը շատ տեղերում աղավաղված է և մեծ վրիպումներ ունի»:

2. Ծանոթագրություն՝ 29 օգոստոսի 1819 թվակիր նամակի

Մարմնամարգալական վարժություններ անելիս, նա երբեմն խելահեղորեն չափն անցնում էր, երբեմն էլ՝ գրեթե դադարեցնում: Նրա մարմինը, ինչպես և հոգին, սիրահոժար հպատակվում էր նրա բոլոր հակումներին: Ամբողջ ձմեռ ամեն առավոտ նա դուրս էր գալիս, մակույկով մեն-մենակ ճեղքում էր ջուրը՝ հայոց կղզի գնալու համար (կղզյակ՝ մի խաղաղ լճակի մեջ և Վենետիկից մոտավորապես կես լյո հեռու), գնում էր վայելելու տեղի գիտուն և հյուրասեր վանականների ընկերակցությունը, սովորելու նրանց դժվարին լեզուն: Իսկ երեկոյան դարձյալ մակույկով վերադառնում էր, հյուր գնում, սակայն մի երկու ժամով միայն: Հաջորդ ձմռանը ամեն անգամ, երբ լճի ջրերը կատաղի ալեկոծվում էին, ականատեսների վկայությամբ, լինն անցնելիս նա դուրս էր գալիս ամենամոտիկ terra firma-ն¹⁴, վարգում էր՝ մինչև առնվազն երկու ձի ուժաապառ անելը:

.....

Նրա կենցաղի չափավորության մասին խոսելիս ես հիմնվում եմ ուրիշների վկայության վրա, թեև դժվար չէ հասկանալ, որ այնպիսի անհամադաստ մի ոգի, որպիսին ինքն էր, որին մշտապես հաճույք էր պատճառում դժվարության հետ գոտե-

¹⁴ terra firma (լատ.) — ցամաք:

ԻՌԵՐԸՆ



Թարգ. բնագրից

Յ. Զ. ՄԻՐԶԱՅԵԱՆԸ



Հրատարակութիւն

„ՓԱՐՈՍ“ Տպարանի

Թ Է Կ ր ա Ն 1 9 1 1

Սրագատիպ Տպր. „ՓԱՐՈՍ“

մարտելը և, որը բոլորովին վերջերս, ինչպես ինքը կասեր, «տա-
ժանակիր մի աշխատանքի» տեղից դրդված տանջահար էր
անում իրեն հայերեն սովորելով, պիտի որ գտներ՝ առ ի չգույն
ավելի լավ ազդակի, խոովքի և հաճույքի մի առանձնահատուկ
կերպ՝ ամեն վայրկյան դիմագրավելու համար վատնումի
յուրաքանչյուր սպառնալիքին, ջանալով զսպել, իր խոսքերով
ասած.

«Բարձրակետը բոլոր երկրային ցավերի,
Բորբորը շաբաթվա մեր վատնումների...»

3. Ծանոթագրություն՝ 17 մայիսի 1823 թվակիր նամակի

Նախքան այս գրույցը, նա երեկոյի մասնակիցներից յուրա-
քանչյուրին տվել էր հրաժեշտի մի փոքրիկ նվեր. մեկին գիրք,
մյուսին Բարտոլիմի¹⁵ քանդակած իր կիսանդրու մի փորա-
գրանկար, իսկ տիկին Բ.-ին¹⁶ հայերեն քերականության մի
օրինակ, որի թերթերին իր ձեռագրով նշումներ կային արված:
Բաժանվելով նրանից, որպես հիշատակ, խնդրել է նրա կրած
զարդերից որևէ բան: Տիկինը նրան տվել է իր մատանինե-
րից մեկը, փոխարենը՝ նա (Բայրոնը-Ա. Բ.) կրծքից հանել
և նվիրել է ազնվափառ տիկնոջը Նապոլեոնի քանդակով
մի փոքրիկ զարդասեղ, որն իր ասելով երկար ժամանակ իր
ուղեկից-ընկերն է եղել:

¹⁵ Բարտոլիմի, Լորենցո (1777—1850), իտալացի քանդակագործ,
իտալացի հայտնի քանդակագործ Կանովաչի ժամանակակիցը:

¹⁶ Տիկին Բլեսինգտոն (1789—1849), իռլանդական ծագումով
անգլիացի արձակագիր, որի վեպերը հռչակված են եղել ժա-
մանակին:

FOREWORD

The letters, journals and various notes of a great writer are valuable historical documents. They may be considered as literary artistic confessions, which speak much of the personality and particularly about the creative methods, ideas and original style of a writer.

The great English poet George Gordon Noel Byron (1788 — 1824) left a very valuable legacy of this kind, which serves as a clue to the very inmost mystery of his poetic works. Byron's letters which are considered to be an eloquent interpretation of his poetry fully reflect the poet's personality. Byron's complete character is outlined before the readers. His letters and journals reflect the great poet more accurately than any of the records left by his contemporaries. The brilliance, charm and wit of his conversation are universally acknowledged.

Byron's vast correspondence gives us an immense material with the help of which we can follow his social, political, aesthetic, philosophical and literary views, which occupy a large place in Byron's epistolary heritage.

Reading Byron's letters and journals we come to the conclusion that being one of the best poets of his time he was a wonderful critic as well. His progressive ideas and thoughts concerning various questions of art, poetic ideas and principles and hence his specific opinions of the contemporaries are frequently expressed in his letters and journals. They are written by a true poet and are full of real historical facts and have documentary authenticity which are of wonderful literary value. They are read as an autobiographical novel about a man, who became the hero of his generation.

The fascination of Byron's letters stems from his immense zest for life. He had an irresistible eagerness for exploring the minds and emotions, both of his contemporaries and himself. His letters and journals are as splendid as his poetry. They are written in a distinct and sincere manner which gives them unusual peculiarity and great attractiveness.

The journals and letters of the great English poet illustrate the whole picture of his society with its interests, customs, traditions and characters.

Reading Byron's letters and journals we seem to be travelling with him to wonderful lands. We follow the great poet and fighter on his pilgrimage through life. Byron perceived every new thought and idea with enthusiasm. He hated the trodden and obsolete truth. "I have never concealed a single thought that tempted me".

That is why Byron's letters and journals mirror his personality and for this reason Byron's glory lasts as long as his poetry. The dignity and value of his art constitute the inseparable part of his poetic works and are the continuation of his "divine poetry".

By their originality his view on literature and culture of other nations occupy a special place. In these letters the reader can find various reliable information not only about literature but also about social and political life of Western Europe in the first half of the XIX century.

Every Armenian (and not only Armenian) tourist arriving at St-Lazare's island in Italy takes advantage of visiting the Mekhitarist Convent¹ the role of which is invaluable in the history of Armenian culture.

As a result of their own efforts they have left Armenian translations of Greek and Roman classics; the works of Homer, Vergil, Sophocles, Ovid etc.

They, however, not only introduced the treasures of European literature to the Armenian people, but also they presented one of the most ancient peoples of the world, the Armenian people, and their culture to the Europeans.

¹ Mekhitarist Convent is an association of Armenian churchmen founded in Constantinople in 1701 by Mekhitar Sebastatsy (1676 — 1749) an outstanding Armenian scientist, known for his activities in the public and cultural life of the Armenian people. After a 10 year's stay in Meton, Greece, the Convent finally settled down in the island of St. Lazarus, not far from Venice.

Byron left England in April, 1816. He settled down in Venice and in autumn of the same year got acquainted with the Mekhitarists. Byron holds an important place in the history of the Armenian and West-European literary links. Byron's connection with Armenian literature isn't confined within the framework of Armenology but also finds its reflection in the world literature. In the XIX century Byron entered into Armenian literature with his works, and study of the Armenian language, literature, treasures of the ancient culture of the Armenian people. Byron's letters referring to Armenian culture, history and language and addressed to Thomas Moore² and John Murray³ date from 1816 — 1821. These letters are valuable in the sense of appreciation of Armenian culture and language and define the great role played by Byron in presenting it to foreigners. In his letters we feel his warm attitude and affection to Armenian literature and language. His numerous translations from the Armenian historians and chroniclers, his immediate participation in the process of publication of the English-Armenian and Armenian-English grammar textbooks and the English-Armenian dictionary once again confirm his interest in Armenian culture.

There is a room in the Convent of St. Lazare which, even to this day, is affectionately shown to the visitors as the room where Lord Byron was taught Armenian. It is said that each morning when Byron's gondola approached the island, Byron's Armenian teacher Haroutune Avgerian⁴, a well-known linguist,

² Moore, Thomas (1779 — 1852), English romantic poet, Irish by birth. In 1811 he gets acquainted with Byron and becomes his close friend. Moore is one of his first biographers. After Byron's death in 1830 he published "Byron's Life, Letters and Journals" in London.

³ Murray, John (1778 — 1843), Byron's publisher. Byron has been in regular correspondence with Murray from 1811 till the end of his life.

⁴ Avgerian Haroutune (1774 — Ankara — 1854 Venice), at the age of twelve he moved to the island of St. Lazarus and in 1798 became a priest. Avgerian was a linguist, lexicographer and a translator. He had a complete command of Greek, Latin, Jewish, Italian, French, English.

translator and lexicographer, would good-humouredly meet him. All the abbots loved him, honoured him, and admired his exceptional genius.

At Avgerian's request Byron wrote an introduction to the Armenian-English grammar textbook. The Mekhitarists decided not to publish this introduction for political reasons. Byron was offended, stopped visiting the Mekhitarists.

The closing years of Byron's short life were spent in Greece where he whole-heartedly devoted himself to the noble cause of urging and helping the Greeks in their fight for freedom against the heavy yoke of Turkish tyranny.

Before leaving Italy for Greece, he once again, for the last time, visited his Armenian friends. The poet's departure was very touching. When the poet's gondola was out of sight, Haroutune Avgerian and Sukias Somalian as Rouben Vorberian describes these "two grey-haired old men looked at each other. He was leaving, he whom they loved as their prodigal son for years. He had to go to the East, and tears rolled down their eyes, and they wept like a child"⁵.

In commemoration of some of his anniversaries (1846, 1894, 1901, 1924, 1932, etc.) the Mekhitarists have published some articles and letters concerning Byron's interrelations with Armenian culture.

The well-known writer Khachik Dashtents in some of his articles has shown Byron's life and works. In his book "Byron and

Hungarian, German and Turkish. Avgerian and Byron prepared textbooks on Armenian and English grammars and published them in 1817 and 1819. Avgerian was famous as a skilful translator. He was the first to translate into Grabar (i.e. Old Armenian) "The Lost Paradise" by John Milton (1825), and "Synodical Discourse" by Nerses Lambronatsy (Nierses of Lampron) into Italian. He is also the author of many valuable works.

⁵R. Vorberian. "Lord Byron (at St. Lazare)". "Bazmaveb", 1932, N 6 — 7, p. 272 (in Armenian).

G R A M M A R
ENGLISH AND ARMENIAN

BY FATHER PASCHAL AUCHER

D. D.

Member of the Armenian Academy of St. Lazarus

V E N I C E

PRINTED AT THE PRESS OF THE
ARMENIAN ACADEMY

1 8 1 7

the Armenians"⁶ there are some extracts from the letters referring to Armenian culture and the Armenians. On the 150th anniversary of Byron's death the Section of Scientific Information at the Academy of Sciences of Armenian SSR published a scientific bulletin "Some Pages of George Gordon Byron's Public and Political Activities"⁷ which comprises poet's letters, referring to the Armenians and Armenian culture, as well.

Several years ago in Venice Byron's letters⁸ concerning Armenian culture and people were published in English. We have translated these letters from Thomas Moore's book⁹ into Armenian and Russian, thus presenting Byron's epistolary heritage to Armenian and Russian readers.

ANAHIT BEKARIAN

⁶Kh. Dashtents. "Byron and the Armenians", Haipethrat (Armenian State Publishing House), Yerevan, 1959 (in Armenian).

⁷The letters are translated by A. Hovsepian and published in "Sovetakan Grakanutiun" (Soviet Literature), 1975, N 4, with a short introduction.

⁸"Lord Byron and the Armenians". Byron's Letters and Journals, Venice.

